ԴԱՍ 6.
Ովքեր ենք մենք Քրիստոսում

	Ներածություն
ՄԱՍ 6.1	Մենք նոր կյանք ենք ստանում
ՄԱՍ 6.2	Մենք մտնում ենք Աստծո հետ նոր փոխհարաբերության մեջ
ՄԱՍ 6.3	Մենք ազատագրված ենք մեղքից
ՄԱՍ 6.4	Մենք առանձնացված ենք աշխարհից
ՄԱՍ 6.5	Ոչ մի ուրիշ հիմք
	Հարցեր և քննարկման կետեր
	Ամփոփում
	Կիրառություն

Նշումների համար

Ներածություն

Ա Հովհ. 5:12–ում Աստծո Խոսքն ասում է.

> *«Ով որ Որդուն ունի, նա կյանք ունի, ով որ Աստծո Որդուն չունի, կյանք չունի»:*
>
> *Հիսուսի աշակերտը հավատքի միջոցով ամբողջովին նոր կյանք է ստացել՝ Հիսուսի կյանքը:*

Հաջորդ դասերում 3 կարևոր թեմաների մասին կխոսենք, որոնք կօգնեն մեզ աճել այս նոր կյանքում. *Ովքեր ենք մենք Քրիստոսում, Ներողամտություն* և *Մաքուր խիղճ:*

Այս բաժնում կդիտարկենք առաջին թեման՝ *Ովքեր ենք մենք Քրիստոսում:* Քրիստոսն այն հիմքն է, որով աճում ենք հոգևորապես:

Մենք կքննարկենք, թե իրապես որքան փառահեղ է այս նոր հավատքի կյանքը:

> *«Եվ եթե որդիք, ապա ծառաներ էլ, Աստծո ժառանգները և Քրիստոսի ժառանգակիցներ»:* (Հռովմ. 8:17)

ՄԱՍ 6.1
Մենք նոր կյանք ենք ստանում

Նշումների համար

- Մենք հավիտենական կյանք ունենք (Հովհ. 3:16):
- Աստված մեր սրտերը սիրով է լցրել իր Սուրբ Հոգու միջոցով (Հռովմ. 5:5):
- Մենք ստացել ենք Քրիստոսի միտքը (Ա Կորնթ. 2:16):
- Մենք ստացել ենք Սուրբ Հոգու վկայությունը (Հռովմ. 8:16):
- Մեր մարմինները դառնում են Սուրբ Հոգու տաճար (Ա Կորնթ. 12:4–11):
- Մենք դարձել ենք Քրիստոսի մարմնի մի մասը (Ա Կորնթ. 12:27):
- Սուրբ Հոգու պարգևները մեզ համար հնարավոր են դարձել (Ա Կորնթ. 12:4–11):
- Որպես Աստծո սեփականություն՝ Սուրբ Հոգու կնիքն ունենք մեր սրտերում (Բ Կորնթ. 1:22):
- Մենք նոր արարածներ ենք Քրիստոսում (Բ Կորնթ. 5:17):
- Մենք ազատ ենք օրենքի անեծքից (Գաղ. 3:13):
- Մենք կենդանացել ենք Քրիստոսի հետ (Կող. 2:13):
- Մենք վերափոխվել ենք Սուրբ Հոգով (Տիտ. 3:5):
- Մենք վերստին ծնվել ենք Աստծո Խոսքով (Ա Պետ. 1:23):
- Մենք ներված ենք և սրբված Հիսուսի արյունով (Ա Հովհ. 1:7–9):
- Մենք ծնված ենք Աստծուց (Ա Հովհ. 2:29):

Նշումների համար

ՄԱՍ 6.2
Մենք մտնում ենք Աստծո հետ նոր փոխհարաբերության մեջ

- Մենք դարձել ենք Աստծո զավակներ (Հովհ. 1:12, Հռովմ. 8:16):
- Մենք ճանաչում ենք միակ ճշմարիտ Աստծուն (Հովհ. 17:3):
- Մենք խաղաղություն ունենք Աստծո հետ (Հռովմ. 5:1):
- Մենք հաշտություն ունենք Աստծո հետ (Հռովմ. 5:10):
- Ոչ միայն զավակներ, այլ նաև Քրիստոսին ժառանգակիցներ ենք (Հռովմ. 8:17):
- Մենք Քրիստոսի սեփական ժողովուրդն ենք (Ա Կորնթ. 3:23):
- Մենք կերպարանափոխվում ենք իր պատկերի նմանությամբ փառքից փառք գնալով, որը Տիրոջից է (Բ Կորնթ. 3:18):
- Մենք խաչվել ենք Քրիստոսի հետ (Գաղ. 2:20):
- Մենք ընդունված ենք Հիսուսի շնորհիվ (Եփես. 1:6):
- Մենք Աստծո ընտանիքի անդամներն ենք (Եփես. 2:19):
- Մենք կարող ենք մոտենալ Աստծուն համարձակորեն և վստահությամբ (Եփես. 3:12):
- Մենք կարող ենք վստահ լինել. Նա, որ մեր մեջ բարի գործը սկսեց, նաև ավարտին կհասցնի (Փիլիպ.1:6):
- Մենք ամեն բան կարող ենք Հիսուս Քրիստոսով (Փիլիպ. 4:13):
- Մենք կանչված ենք բաժնեկցելու Նրա ժառանգությունը (Կող. 1:12):
- Մենք պատկանում ենք Աստծուն (Ա Պետ. 2:9):
- Մենք աստվածային բնության մասնակիցն ենք (Բ Պետ. 1:4):

ՄԱՍ 6.3
Մենք ազատագրվել ենք մեղքից

Նշումների համար

- Մենք ազատ ենք կապանքներից (Հովհ. 8:31–36):
- Մենք ազատագրված ենք մեղքից (Հռովմ. 6:18):
- Մենք այլևս դատապարտության տակ չենք (Հռովմ. 8:1):
- Մենք պետք է մեր մտքերը համապատասխանեցնենք Սուրբ Հոգուն (Հռովմ. 8:5–6):
- Մենք փրկվել ենք մեղքի հետևանքներից (Հռովմ. 10:13):
- Մենք դարձել ենք արդար և սուրբ (Ա Կորնթ. 1:30):
- Մենք լվացվեցինք, սրբվեցինք և արդարացանք (Ա Կորնթ. 6:11):
- Մենք գնված ենք Նրա արյունով (Եփես. 1:7):
- Մենք այլևս չենք ապրում բավարարելու մեր մեղավոր բնության ցանկությունները (Եփես. 2:3):
- Մենք այլևս բարկության որդիներ չենք (Եփես. 2:3):
- Մենք փրկված ենք շնորհքով, հավատքի միջոցով (Եփես. 2:8):
- Մենք ներված ենք (Կող. 1:14):
- Մենք ամբողջական ենք Քրիստոսում (Կող. 2:10):
- Մեր էությունը փոխված է (Կող. 3:9–10):
- Մեր խիղճը սրբված է մեղավորության զգացումից (Եբր. 10:20):
- Մենք բժշկված ենք (Ա Պետ. 2:24):
- Մենք մեռել ենք մեղքի համար և ապրում ենք արդարություն գործելու համար (Ա Պետ. 2:24):
- Մենք սրբվել ենք անցյալում գործած մեղքերից (Բ Պետ. 1:9):

Նշումների համար

ՄԱՍ 6.4
Մենք առանձնացված ենք աշխարհում

- Հիսուս Քրիստոսի միջոցով մենք ավելին ենք, քան հաղթողներ (Հռովմ. 8:37):
- Մենք Քրիստոսի դեսպաններն ենք (Բ Կորնթ. 5:20):
- Մենք հավատքով ապրում ենք Աստծո Որդու մեջ (Գաղ. 2:20):
- Մենք խաչված ենք աշխարհի համար (Գաղ. 6 :1):
- Մենք հարություն ենք առել Քրիստոսի հետ և նստած ենք երկնավորներում (Եփես. 2:6):
- Մենք սուրբերի հետ քաղաքացիներ ենք և Աստծո ընտանիքի անդամներ (Եփես. 2:19):
- Մենք փրկված ենք խավարի իշխանությունից և տեղափոխված Աստծո թագավորություն (Կող. 1:12):
- Մենք սպասում ենք նոր երկնքի և նոր երկրի, արդարության բնակարանին (Բ Պետ. 3:13):

ՄԱՍ 6:5
Ոչ մի այլ հիմք

«Եվ ոչ ոք չի կարող մեկ այլ հիմք դնել, քան այն, որ արդեն դրված է, և որն է Հիսուս Քրիստոս» (Ա Կորնթ. 3:11):

Մատթ. 7:24–27 –ում Հիսուսը շատ պարզ է դարձնում, որ ճիշտ հիմք ունենալը շատ կարևոր է: Շատ քրիստոնյաներ չեն աճում իրենց հավատքի մեջ, և ոմանք էլ ծայրահեղ անկայուն են սխալ հիմքի պատճառով: Ամուր հոգևոր հիմքը անհրաժեշտ է մեր հավատքի կյանքում: Մենք կարիք ունենք.

- Հոգևորապես աճելու:
- Փորձությունների ժամանակ հաստատակամ լինելու:
- Հիսուսին հետևելու և ծառայելու:

Հարցեր և քննարկումներ

Նշումների համար

Խորհի՛ր յուրաքանչյուր հարցի շուրջ: Թո՛ւյլ տուր, որ Սուրբ Հոգին կոչ անի այն կարևոր կետերի համար, որոնք կարիք ունես կիրառելու կյանքում.

1. Հաճախ չենք ապրում այն ճոխության լիության մեջ, որ ունենք Քրիստոսում : Ինչո՞ւ է այսպես:
2. Արդյո՞ք Քրիստոսում պետք է ապրենք մեր սեփական կարողությամբ, թե՞օգնության կարիք ունենք (Հովհ. 14:26, Հովհ. 16:13–15):
3. Երբ սկսենք ապրել՝ գիտակցելով, թե ովքեր ենք մենք Քրիստոսում, ի՞նչ արձագանք կարող ենք ակնկալել աշխարհից (Հովհ. 15:18, 16:1–4):
4. Ինչպիսի՞ն էր Մարիամի դիրքը Ղուկ. 1:38–ում:
5. Ըստ Ես. 55:10,11–ի՝ ինչպիսի՞ զորություն ունի Աստծո Խոսքը:

Ամփոփում

1. Քրիստոսի մեջ մենք փառավոր ժառանգություն ենք ստացել: Հիսուսի աշակերտը ապրում է իր կյանքը այս հարստության հավատքով:
2. Շատ կարևոր է, որ հասկանանք, ովքեր ենք մենք Քրիստոսում, և որն է մեր դիրքը: Հիսուս Քրիստոսը մեր վեմն է:

Առաջադրանք

Հիմք պետք է դրվի: Կյանքում այս հիմքը դնելը մեր անձնական պատասխանատվությունն է, և մենք պետք է գործածենք այն հարստությունները, որ ունենք Քրիստոսում: Եթե հավատքով ապրենք՝ համաձայն այն Խոսքերի, որ մեջբերված են 6.1–6.4 մասերում, ապա այդ ամուր հիմքը կկառուցվի:

Հաջորդ շաբաթների ընթացքում գործածի՛ր քո ամենօրյա *մենիկ պահը*՝ խորհելու այս Խոսքերի շուրջ: Շատ օգտակար կլինի, երբ կիրառես հետևյալ քայլերը.

Նշումների համար

1. Մտաբերի՛ր Խոսքը և խորհի՛ր դրա շուրջ:
2. Արտահայտի՛ր այն քո սեփական ձևակերպումով:
3. Ո՞րն է այստեղ տրված խոստմունքը:
4. Ո՞րն է այն պատասխանատվությունը, որ քեզանից է պահանջվում:
5. Արդյո՞ք այս խոստումը հոգում է քո կյանքի կարիքը: Եթե այո, ապա ինչո՞ւ: Եթե ոչ՝ ինչո՞ւ:
6. Շնորհակալությո՛ւն հայտնիր Աստծուն այն հարստության համար, որ ստացել ես, բայց ասա՛ նրան, թե ինչում ես դժվարանում:
7. Ընդունի՛ր խոստմունքը հավատքով:
8. Այն, ինչ ասում է Աստվածաշունչը, նախապայմանն է խոստումի իրականացման: Կիրառի՛ր այն քո առօրյա կյանքում:

Եզրափակում.

«Քրիստոսի Խոսքը բնակվի ձեր մեջ առատապես ամեն իմաստությունով, իրար սովորեցրեք և խրատեցեք, սաղմոսներով և օրհնություններով և հոգևոր երգերով և շնորհքով օրհնեցեք Տիրոջը ձեր սրտերում» (Կող. 3:16):

«Որոնցով ամենամեծ և պատվական խոստմունքները տրված մեզ, որ նրանցով հաղորդակից լինենք աստվածային բնությանը՝ աշխարհի մեջ ցանկությունից եղած ապականությունից հեռու փախչելով» (Բ Պետ. 1:14):

*«Որ հիվանդամիտ չլինեք, այլ նմանվենք **հավատքով և երկայնամտությամբ խոստմունքները ժառանգողներին**»* (Եբր. 6:12):

Պատասխաններ

1. Անձնական նկատառումներ:
2. Չենք կարող ապրել այս կյանքը մեր սեփական ուժով, մենք կարիք ունենք Սուրբ Հոգու օգնության:
3. Աշխարհը մեզ կատի և կհալածի:
4. Մարիամը հնազանդվեց Աստծո կամքին:
5. Աստծո Խոսքը զորություն ունի կատարել այն, ինչի համար որ ուղարկվել է: